

անյաջող փորձեր արակատար չեն, և հասարակութիւնը միշտ տագնապի և ահ ու դողի մէջ է: Գողերը իրենց չարութիւնը ետեւէ ետեւ կրկնելով կ'երեւի որ տեղւոյն ստիկանութեան վերակացութիւնը բանի տեղ չեն գներ: Բանի մի օր կայ որ Մարտիանի ֆէնիլէ անուն իօնի նաւու մը մէջէ բան գողնալու փորձ մը ըրին, որ նորոգութեան կարօտ ըլլալով ցամաքը բաշտած էր: Բայց նաւաստիները հրացանով ասոնք փակցուցին. գողերուն մէկն ալ զարնուեցաւ, և երկու երէք օր ետքը մեռաւ: Այս գողերս ալ մայրըլ էին: Հատ վաճառականներու գաղտնի և անձանօթ ծամբով տեղեկութիւններ կը ստուէր որ գողերը անոնց ստացուածոցը վրայ աչք ունին: Այս փրայ ամէն մարդ աչքը չորս բացած է. իրենց ընչոցը պահպանութիւն կ'ընեն. և ամէն ալ մտքերին գրած են որ չարագործներուն բնաւ չի խնայեն:

Աւագրիայի հիւպատոսարանի գործակալ Պ. Ղեքերիկին ձեռքը առանց ստորագրութեան նաւակ մը անցաւ. որուն մէջ իրեն իմաց կը տրուէր որ, հիւպատոսարանին մէջ մեռցուած մայրըլներուն արեանը վրէժխնդրութիւն պիտի ըլլայ: Պ. Ղեքերիկին զատ հինգ հոգի ալ անոր գործակալներէն պիտի մեռցնեն:

Այս գէշութիւններուն առաջը առնելու համար Ինկիլիզի հիւպատոսը պատուէր հանեց բոլոր մայրըլներուն որ հիւպատոսարանին դիւանը (բան չէլէրիան ներկայանան, և Ինկիլիզ տէրութեան հպատակ ըլլանին ստուգող անցագիրներին (բաւարօններն) քննել տան. սարաւալով որ ով որ այս հրամանիս չի հնազանդի և անցագիրը քննութեան չի բերէ նէ՝ տեղւոյն կառավարութեանը պիտի մասնէ:

Մարտի 21 ին (9 ին) բոլոր հիւպատոսները Պ. Ղեքերիկին տունը ժողովուրդան յիշեալ չարագործ գողերը զսպելու և անոնց երեսնէն գալու միասին առաջը առնելու համար հնաքը մտածելու, բայց առանց հաստատուն որոշում մը ընելու իրարմէ բաժնուեցան: յիշեալ նամակը գրողը այս անորոշութեանը չի հաւանիր. կարելի է՝ անոր համար որ գողերուն յանգեցնութիւնը կ'եւէլայ:

Քաղաքին վաճառանոցները միս գրեթէ բնաւ չի գտնուիր. ուզողը չափազանց դին տալու կը հարկադրուի: Միս ծախողներուն խանութներուն առաջը քաղաքը կը կենան. և մէկ մարդու կէս հօխայէն աւելի միս առնել թող չեն տար:

Մարտի 21 մը օստմանեան շոգեխառու մը մէջէ 10,000 զուռուշ ստակ գողցեր էր. բռնուեցաւ. և կուսակալին պալատին բանտը դրուեցաւ:

Այն մայրըլները և կղզեցիները (Թալանները) որ ասկէց առաջ կանոնաւոր վարմունք չունէին, գողութեան և յախջակութեան յանցանքով բռնուած էին, ամէն օր կը բռնուին և բանտ կը մտնեն:

Ալեքանդրէն նոյն լրագրոյն կը գրեն: Մեքայի Ռիմարիէի և մանուֆիէի թղթաբեր շոգեխառուները օգոյն գէշութեանը համար իրենց սահմանեալ ժամանակին չի կրցան կատանդնուպօլիսէն հասնիլ: Այս սոսալին շաբթուն օգը շատ գէշ գնաց. սաստիկ հիւսիսային հողմ. թանձր սառույց և առատ ձիւն եղաւ, ինչպէս որ խորունկ ձմեռուան մէջ կ'ըլլայ: Յետեւ տարի մը կայ որ հոս օտանկ ձը մեռ եղած չի կայ եղեր. անոր համար երկրագործները բերքերուն վրայ յուսահատած են. և հիմա կուց սոսուց գիտցուածը այն է որ գարին խեղ չունի, գրեթէ բոլորովին սնչուցածի պէս է. քանի մի տեղ նորէն գարի ցանեցին, և ասոնք յաջողի ալ նէ՝ ժամանակին չեն հասնիր: Հատ տեղ ցորեններն ալ աւրուեցան: Պոլսու մեծ ծառերուն շատերը չարցան, ծաղիկ բացող ծառեր ալ եղան, որ ձիւնը և սառը վրայ գալով խաբուեցան. ուստի այս տարի այս կողմերս պտուղ ըլլալէն յոյս չի կայ. ըլլայ ալ նէ խիստ բիշ կ'ըլլայ: Թղթաբեր սուր հանգանները ուշացան. և քանի մի լեռնային տեղերուն հետ հաղորդակցութիւնը բոլորովին դադարած է: Մինչեւ մարտի 20 (8 ին) ձիւնէ և սառուոյցէ զատ բան տեսնուած չէր. 21 ին միայն անձրեւ տեսանք:

Փետրվար 25 ին (13 ին) գիշերը բառասուն գող Բալաներայէն կէս ժամ հեռու գեղ մը մտեր են. երկու տուն կողոպտեր և երէք ալ անմեղ մարդիկ մեռցուցեր էին: Կառավարութիւնը ստանց ետեւէն 60 զինեալ կործիչ մարդիկ հանեց. Գողերուն գլխաւորը կ'ընեն թէ Լանի Վէլիցոյն անուն մէկն է. և իրենք գրայի տէրութեան (յուստատանի) սահմանէ հան անցած են: Սենեկ Լէնիչէ հիւրէն և Գօլգէն թուղթ չի գալով՝ այս բանիս վերջը ինչպէս ըլլալը չի հասկըցուեցաւ:

Պուրտանու երկիրը հանգիստ է. բնակիչները միայն սովէ կը նեղին. որովհետեւ անցած տարուան վարուցանք բիշ եղաւ. և բերքը բնակիչներուն չօգտեց: Մեծապատիւ կիթա պէյը ձեռքէն եկածը կ'ընէ, խեղճ աղքատներուն օգնութեան հասնելու համար. և ստորագրութիւն մըն ալ բացաւ. որուն առաջին գրուողը ինք եղաւ, և երկրին բոլոր մեծամեծները և հարուստները անոր օրինակին նայելով գրուեցան, որով աւելի կարօտութիւն ունեցողներուն օգնութեան պիտի հասնուի:

Պուրտանու գործը Պուրտանու երկրէն պարտըւիլ սկըսան: Մեծագոր օսմանեան տէրութեան ուսուցող մէջը եղած դաշնագրութեանը համեմատորբան զօրք հան պիտի մտար նէ՝ միայն այնքանը պիտի մնայ. ուրիշները իրենց երկիրը պիտի դառնան:

Սրբաբերուն իշխանութեան երկիրն ալ շատ հանգիստ է: Սահմանապահները տիրող իշխանները միշտ պօշնագրութեան կը յորդորեն որ օսմանեան մեծագոր կայսերութեան հնազանդ ըլլալու ծամբէն դուրս չէլին. և կառավարութեան գործակալներուն խօսքը մոտիկ ընեն. որովհետեւ անոնց մտածմունքը և անօրէնութիւնը հասարակաց բարեւոյն համար է:

Սրբաբեր երկրին ծամբաներուն շինութիւնը և նորոգութիւնը սկըսաւ:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ. Ինկիլիզի ծոմիկի կ'ըրայ որս գիրը Կէհրանէն յաւնալը 2 ին գրուած նամակ մը հետեւեալ տեղեկութիւնները կը քաղէ, որ թէպէտ մինչեւ հիմայ էփ աղէկ հիւնցած են, բայց Պարսկաստանին հիմախուս վիճակը աղէկ հասկըցնելուն համար հոս գրելը պատշաճ տեղեցիներ է: Մայրաքաղաքիս մէջ նորէն հասարակութիւնը սոք եղաւ ասկէց քանի մը օր առաջ. և բազմութիւն մէկէն իմա Ղեքերիկին անուն երեւելի կարգացողին գօցին, կ'աղաչէին որ առաջին ինայ, զիրենք շահին ներկայացնեն. սրպէս զի հաճեցնեն անիկայ որ Միրզա Բաքի խանը փոխարքայութեան պաշտօնէն հանէ: Իմա՞ր այս բանին խառնուիլ չուզելով ժողովրդեան ըսածին հաւանութեան կամ չհաւանելու նշան մը ցայ չուած գաղանի մը ստանէն դուրս ելաւ, առաւ քաղէ: Կազմութիւնը նորէն կուգանք ըսելով յրուեցան. բայց ասոր վրայ կառավարութեան գործակալները շատ մը մարդ վերջուցին բանտը տարին. որոց մէջ երեւելի մարդիկ ալ կան. ինչպէս են շահին հօրեղբայրը Սիւլէյման խան, թագաւորութեան զօրաց մեծ սպարապետը Իպրահիմ Խալիլ խան, որ հիմայ այն պաշտօնէն երաճ էր, մէկ զօրապետ մը Հասան խան անուն, և ուրիշ շատեր. սրանց վրայ կարծիք կար թէ ժողովուրդը սոք հանողները ասոնք են:

Թէպէտ այս խտութեան ծամբաներէն ետքը նոր խառնութիւն մը չեղաւ, բայց դժգոհները շատ են, և սիրտերնին ինչպէս չէ, և կասկած կայ որ նորէն ժողովուրդը կարգացողներէն գրգռուելով աւելի ուժով սոք կ'երէ. և բոլոր Պարսկաստանի մէջ ընդհանուր յեղափոխութիւն մը կ'ըլլայ: Յուսելի է որ Միրզա Բաքի խանը չէ հասկըցած որ մէկ մեծ մը խտութեան ծամբայ բռնելով և առանց պատճառի այս ու այն վերցնել և բանտը դնել տալով ժողովրդեան առաջը սիրելի և յարգելի և անխաճելի չըլլար. և իրեն անհաստատ և հիմունք վրային խտութեան իշխանութիւնը հասարակութեան աչքին առեւել ըլլալով չհաստատուիր: Այս օրը ժողովուրդին աչքը հաճի խանին վրայ է. որ ասկէց առաջ իշխանութեան հասած ատենը բոլոր Պարսկաստանի մէջ բարեկարգութիւն մտցունելու յոյս տուաւ. թէպէտ այն յոյսը իրօք արդիւնացուներու ժամանակ չունեցաւ:

ԵՐԵՎԱՆԻ ԼՈՒՐԵՐ

ԳԱՂԱԿԱՆ: Բոլոր Եւրոպայի քաղաքական մեծախն վրայ անընդհատ քառուիքը որ Կոնստանդնուպօլիսէն լրագիրը հետեւեալ ընդհանուր տեղեկութիւնները կուտայ:

Օտար տէրութիւններէն մարտի 8 ին Գլանսայ հասած լրագրերը շատ աղէկ չեն, բայց անանկ բաներ են ասոնք ասանկ ըլլալը հասարակութիւնը արդէն կը գուշակէր: Օուկոյցերի սոքի վրայ է. իրենց երկիրն փոսնելի մէջ ըլլալը հասկըցած են. և ամէն մարդ գիտէ որ երբ որ սահմանակից տէրութիւնները իրենց երկիրը զօրք թափեն նէ, որ դուրսէ երկրս ժամանակ ալ չուզեր անիկայ ըլլալու, ի-

րենք առանց զէնքի գտնուելով անխոհեմութիւնը բաժ կ'ըլլան. ամէն մարդ զինուորական պատրաստութիւնները ընելու է: Առասի ամէն տեղ ասանկ պատրաստութիւններ կ'ըլլան. բայց աղմուկ և շփոթ չկայ:

Աւագրիայի տէրութեան թէպէտ գանձը նուազած է, և ամէն տեսակ նեղութիւններու մէջ ինչպէս է, այսու ամենայնիւ իր խոհեմութեամբը ետեւեւ ետեւ զօրքը շտպընելը պատշաճ կը դատէ: Արատեցքի Մառէշալին զօրքը օրէ օր կը շատնայ. և ուրիշ ժամանակ ասանկ ահարկու բանակ մը կազմած չէր:

Միւսէն ծանրը և ամէնէն հաստատուն երեւցածը այն է որ Ռուսը ուղղակի գերմանական տէրութեանը վէճերուն մէջ մասած է իբրեւ միջնորդ: Մինչեւ հիմայ ուսուցող կայսրը Գերմանիայի թագաւորական և իշխանական պալատները դեսպանական պաշտօնով երեւելի մարդիկ խրկած չունէր, որ հիմայ խրկած է:

Յայտնի է որ Բրուսիայի կուսակից գերմանական իշխանութիւնները ընդհանուր գերմանական ժողովը Լըֆուրգ քաղաքը կ'ընեն կոր: Ռուսաց տէրութեան կողմէն Սիբիւսի կոմսը, որ դեսպանութեամբ Փարիզ երթալու որոշուած էր, հիմայ Լըֆուրգ պիտի երթայ նոյն տէրութեան կողմէն գերմանական ընդհանուր աղագային ժողովին դեսպան: Կոնստանդնուպօլիսէն քաղաքը ժողովուած գերմանական դաշնակցութեան ժողովին դեսպան գընացած և հոն ընդունուած է:

Փարիզու ասանկը նախնալ օրագիրը կ'ըսէ. Բրուսիայէն եկած նամակներէն կ'իմանանք, որ Մեծաղէկը դքսութիւնը գրաւելու համար, որ առաջ Բրուսիային էր և ետքը Օուկոյցերի կառավարութիւնը իրեն միացուց, Բրուսիայի տէրութեան կողմէն Վրանիէլ զօրապետը որոշուած է 30,000 զօրքով: Այսպէս քիչ զօրքով այս բանին ձեռք բարենեւուն պատճառը այն է որ, Գլանսի կառավարութեան կասկածը վերջընէ. անոր այս գործով ծանուցանելով թէ այս արշաւանքս Մեծաղէկը դքսութիւնը գրաւելին և նորէն իր իշխանութեան տակը անցնելէն զատ ուրիշ նպատակ չունի: Առաջուց ըսուած է լրագրոյս նախնալ թղթի թէրթեւուն մէջ թէ, Գլանսի կառավարութիւնը Բրուսիայի զինուորական պատրաստութիւնը տեսնելով ինքն ալ իր արեւելեան սահմանապահները զօրքը շտպուց. Այս պարագայիս մէջ թէ որ Բրուսիան Օուկոյցերի մէջ շատ զօրք հանելու ըլլայ նէ՝ Գլանսըն ալ կը հարկադրի գէպ ՚ի այն կողմը զինուորական շորժում մը ընելու, և բանը կը ծանուցանայ: Մէկ կողմէն ալ Օուկոյցերի գաշակցութեան ընդհանուր կառավարութեանը սպառնալով թէ մը տալ է, որ Բրուսիայի միայն Օուկոյցերի գէմ թշնամութիւն մը բանեցնել չէ, այլ միայն 1815 ին եղած Վիենայի դաշնակցութեան կանոնները հաստատել է: Սակայն այս ալ կ'երեւի որ այս 30,000 բրուսիայի զօրաց Օուկոյցերի մըտնելը մէկ ուրիշ արշաւանքի մը յառաջարկութեան պէս կ'երեւի: Ասոնց ետեւէն Աւագրիայի և Պարսկիւնի և Մաքսիմիայի և Բրուսիայի զօրքերէն բաղկացեալ ահեղ բանակ մը կայ, Կերմանիա սպարապետութեան ոգին գրգռելով ասին ու վրայ ընելէն ետքը Օուկոյցերի փախչելով անիկայ ալ անգադար խռովութիւն արձարծող մարդիկը անիկէց հանել տալու համար: Կերմանիական քանի մը մանր իշխանութիւններն ալ մէկ քանին, որոց մէկն է Հեսաէն, և Պատրիկ գրուութիւնը, իրենց կողմէն զօրք այս գործոյս մասնակից պիտի ըլլան:

Այս օրերս Պատրիկ մեծ գուբիկ կ'ընէ Փարիզէ, և կ'ըսեն որ Կերմանիայի ընդհանուր վիճակին վրայօք մէկ նպատակ մը պիտի ունենայ ասոր ձառնարկորդութիւնը. որովհետեւ Պատրիկ անանկ մէկ երկիր մըն է, որ Օուկոյցերի Կերմանիա անցնելու ծամբու վրայ է. և Օուկոյցերի գրաւուող գերմանացի խռովարարները Կերմանիա ինչ խռովութեան սերմ ցանելու ըլլան նէ՝ առաջին բողբօքը Պատրիկ մէջ կը ձըլի: Այս համար հարկ եղած է այս դքսութեան երկիրն ալ Հօհենցօլթեանի պէս Բրուսիայի պաշտպանութեան տակը ձգել:

Գլանսի ինչպէս քաղաքները կ'ըսէ. Բրուսիայի կառավարութիւնը Մեծաղէկը վրայօք ունեցած վէճը լուծելը Գլանսի ինչպէս յանձնարարական ժողովին առաջարկեց. և թէպէտ զինուորական պատրաստութիւններ ալ կ'ընէ, բայց կ'երեւի թէ խաղաղութեան ծամբով կը լիննայ:

Կառավարութեան նախարար պաշտօնատէրերուն մէկ ժողովին մէջ, սրուն նախադաս գրաւուեցաւ Լաւի Կոբուլէն, Օուկոյցերի գործքե-

բուն վրայ խօսք բացուեցաւ : և այն ժողովքին ուր ընդամբը Վ իննա և Պէրին նամակներ գրուեցան, որով Պրանսիոյ կառավարութիւնը Վստգրիայի իրաւաւորութեանց կը ծանուցանէ որ, Օւլիցիցի մէջ գերմանացի զօրք մտնելուն պէս Պրանսիոյ ալ ճիշտ վաճառք և աւազանա քաղաքները գրաւել որոշած է. որ իրեն սահմանակից են :

— Վրացիին ժողովքին անգամ ըլլալու անձանց ընտրութեանցը մէջ անդ տեղ ուսակալութեանը և Կոնստանտնուպոլիսի զօրանալով իրենց կուսակիցներէն կարող եղան ընտրելու : և այն ալ կառավարութեան կուսակիցները ըրած ընտրութեաններուն մէջ չի կրնալ միաբանելու Վստգրիայի և Վրացիայի միջև : Վստգրիայի և Վրացիայի միջև ընտրութեանը անգամ ըլլալու կառավարութեան և բարեկարգութեան և կարգի կանոնի կուսակից են : և Կոնստանտնուպոլիսի ժողովքին մէջն ալ իրենց ուղածը պիտի չկրնան ընել :

— 1848 ին փետրուար 24 ին եղած յեղափոխութեան վրայ յուլիսի արձան ըսուած արձանը որ 1830 ին յեղափոխութեան և Վրացիին թաւաւոր եղած ժամանակին յիշատակին համար արեւ կուած արձան մըն է, խորհրդաւոր նշաններով զարդարած էին : որպէս զի երկու յեղափոխութեան յիշատակը մէկ արձանի վրայ ըլլայ : Մարտի 12 ին (փետրուար 28) քաղաքին պահապան զօրաց հրաւմանատարները ասոնք ժողովքը կարգաւ վանդակապատին ներսի դին շարելու էին : ետքը մէկ կողմ մը եկաւ, այս նշանները ամենեւ ալ անկէջ վերջուց : աստիճաններուն ասոնք պահելու համար յատկապէս անգամ տարու : Վստգրիայի վերջուած առեւտր ամենեւին արմուկ մը և շիտթութիւն մը չեղաւ : Թէպէտ փետրուար 24 ին յեղափոխութեան նշաններուն մէկն ալ ժողովրդայն աշքին առ ջեւեէն վերջուած եղաւ :

— Մարտի 7 ին Փարիզէն ժողովքը քաղաքի օրագրին կը գրեն : Քանի մը օր է որ շատերուն բեքանը մէկ հետաքրքրական խօսք մը կը պարտուի : Կրնան որ Վրացիին կուսակիցները որ օտարներէն կը ընտրուին, և օրինակորակները որ Պրանսիոյ նկատմամբ թաղաւորական հին տանի կուսակից են, ի յարու հետ միաբանելու շատ ջանք եղաւ : Բայց Վրացիին յամուտեղով այս ջանքս պարտապէտ ընտրուեց վրայ օտարներէն մէկ մասը կը խորհին որ Պրանսիոյ տան (Օւլիցիցի) քաղաքին տան ցեղին հետ միաբանելով նորէն Պրանսիայ թեւու ձեռուց տակէ ձարը նային : Թէ որ ասիկայ յաջողի նէ՝ Փարիզը կոմսը որ Վրացիին թաւաւոր է և թաղաւորութեան ժառանգը, թագաւոր պիտի հրատարակուի : և Վրացիին յարգելով Պրանսիոյ թագաւորութեան խնամակալ պիտի ըլլայ մինչեւ Փարիզը կոմսը մեծնայ :

Վրացի տեղացի ալ պիտեմք որ՝ ազգային ժողովքին անգամ ընտրելու մասնաւոր ժողովքներուն մէջ Կոնստանտնուպոլիսի ալ խօսքը եղբէր է որ Փարիզը բեքանը ասն և ժողովքին անգամ ընելն : Կար Փարիզը ներկայ գտնուելով Փարիզը կոմսը թագաւոր ընել խորհրդներուն շատ կուսակից կը գտնէ : ուստի ասոր վերագործը և ընտրութիւնը առաջարկուներ ալ վերջուցեալ օտարներէն կրնան ըլլալ : Կարելի է որ այս բանին մէջ Վրացիին յարգելուն ալ ձեռք սենի կարծող ըլլայ : որովհետեւ անոր համար ալ կը զօրուցուէր որ յեղափոխութիւն մը կը պատրաստէ ձեռուց տակէ, և ներքին գործոց անսլին հարկ եղաւ այս խօսքս ջրել յայտնի կերպով :

ԱՆԳՂՈՒՄ : Սրբաբար անուն ինկիլիզի յարգի օրագրոյն մէկ թուոյն մէջ հետեւեալ հետաքրքրական անգիւղութիւնը կը կարգաւորուի, ինկիլիզութեան օրինակ Վստգրիայի իրաւաւորութեանը թուոյն մէջ 1848 թուականը հասցնելով : 1550 թուին Վստգրիայի քաղաքին մէջ խորհուրտեալ համար երկու երեք սայի բեռ անուր կ'օգտէ եղբ : 1615 թուին, 200 նաւ, և 1705 ին 600 նաւ, 1805 թուին 4865 նաւու բեռ անուր պէտք եղբ է : Ենկէջ ետքը Վստգրիայի եկամտ և տարուան մէջ խորհուրտեալ անուր և ծուխներուն չափը այս կերպով շատցեբ է : 1820 ին 5884 նաւ, որ ամենը մէկէն 1,692,992 թօնկար կը բաշէր : 1830 ին 7108 նաւ, 2,079,275 թօնկար : 1840 ին 9132 նաւ, 2,556,899 թօնկար : 1845 ին 11987 նաւ, 3,403,320 թօնկար : 1848 ին 2717 նաւ, 12267 անգամ ձանապարհորդութիւն ընելով, և մէկը 3,418,340 թօնկար անուր բերբեր են : Եսոնց մէկ ինկուցուի Վստգրիայի քաղաքին 1550 էն մինչեւ հիմա որքան բազմամարդութեան կողմանէ եկել նալը, և կրակով ըլլալու արուկաններուն որքան

առաջ երթալը : — Սրբաբար օրագրը կ'ըսէ : մարտի 7 ին հինգ շաբթի օրը Վ. Սրբաբար անուր հրեայն Վստգրիայի վաճառականաց կողմէն հասարակաց խորհրդարանի (քրմին հասուղ) անգամ ըլլալու համար պիտի ներկայանայ, և ըստ կանոնի երգումն ալ պիտի ընէ ինչ կերպով որ իր կրօնին դէմ չգործելով կրնայ ընելնէ :

— Ինկիլիզի կառավարութեան արտաքին գործոց տեսուչը Վստգրիայի հասարակաց խորհրդարանին մէջ Տանիմարքայի և Վրացիայի մէջ եղած զինարարարին վրայք արեւել ըստ տարով ալ մէկըն ալ ուրիշացան : Պատերազմը ետ պիտի մնայ : և զինարարարին որոշեալ ժամանակը պիտի երկին նայ, մինչեւ որ խաղաղութեան ձամբով գերմանական տերութեանց ու Տանիմարքայի մէջ եղած վեճին մէջ տեղը գտնուի : Եսոնի է որ Վրացիային Տանիմարքայի դէմ Շէքիլի — Չօլդայն դքսութեանց վրայ պատերազմ բանալու միայն իրեն համար չէ, բոլոր գերմանական դաշնակցութեան համար է :

— Վ. Վստգրիայի անուր երեւելի վաճառականը, որ ցորենի և ուրիշ ընդեղինաց վաճառականութիւն կ'ընէր Վստգրիայի մէջ, 120,000 լիւրա ըստ գէտին (26,400 քէսէ ստակ) պարտքով բայց երբ է : Կար զիտար առաւելապէս ինկիլիզ վաճառականներուն կը դրայի : ուստի Վստգրիայի գրման ժողովքը որոշեալ շատ տարութեան մէջ ինկաւ :

— Վեճիմարի մարքայապատիւ գուքը (ինկիլիզի թագաւորական հորեղբայրը) մարտի 1 ին իրեն 76 երրորդ տարին մտնելուն տարեգործի հանդէսը ըրու իրեն պարտուած մէջ : Կար զոտար տերութեանց Վստգրիայի գտնուող գեոպոլիտիկները և ինկիլիզ տերութեան նախարարները նոր տարին շնորհաւորելու և յաջող և երկար կեանք բարեմաղթելու համար հոն ներկայ գտնուեցան :

ԱՆՍԻՐԻԱ : Մաճուռի սպասարարութեան հաղորդ գտնուողներէն Վրացի Վստգրիայի և Հենրի Սալաին զօրապետները՝ Հերմանդասի զինուորական տանին վճռով մահուան դատապարտեցան : Կար զոտար պատիւր փոխուեցաւ : Վրացի Վստգրիայի տան տարի, և Հենրի Սալաինը վեջ տարի, բերգի մը մէջ բանտարկեալ պիտի մնան :

ԻՏԱԼԻԱ : Թօքսանայի մեծ գուքը իւր երկրին խաղաղութեանը համար ուղեր էր որ աւսղբերիցի զօրք գտնուին հոն, և պայման դրած էր որ ասոնք մինչեւ այնքան ժամանակ ինկալ թօքսանայի երկրը, որ նախարարներուն ինկալ կորէ որ առանց անոնց օգնութեանը կարող են կառավարելու : Բայց Վրացիին թագաւորական դիւանը ասիկայ չընդունիր : Կուգէ որ Վստգրիայի զօրաց թօքսանայ կենարուն ճիշդ ժամանակը որոշուի : և ինքը կ'առաջարկէ որ մինչեւ տան տարի կեանս և թէ որ անկէջ ետքն ալ կենարուն պատշաճ տես նալի նէ՝ նորէն պայմանագրութիւն ըլլայ :

Վստգրիայի վեճին վերջը ինչ ըլլալու յայտնի է կ'ըսէ ժողովքը քաղաքի օրագրը : Հարկ պիտի ըլլայ որ թօքսանայի կառավարութիւնը ընդունի Վստգրիայի դրած պայմանները, և այն պայմաններով պահէ աւսղբերիցի զօրքը : Սրբաբար մեծ գուքը իր մարին վրայ յամուտեալ մնայ և այն զօրքը իւր խրկէ նէ՝ իրեն անկիւնը պատճառ պիտի ըլլայ : Երկայ յիշեալ օրագրին խորհրդածութիւնն է : Բայց կ'երեւի որ թօքսանայի մեծ գուքին Վստգրիայի առաջարկած պայմանները չընդունիր իրեն անկիւնը օրինակը պատճառ մը չկրնար ըլլալ : Վստգրիայի կառավարութիւնը թօքսանայի վրայ ուղղակի իշխանութիւն մը չունի, կառավարութեան հպատակներուն ալ սիրելի չէ : որովհետեւ թօքսանայիք իտալացի են, և իտալացիք ու աւսղբերիցիք իտալա բարեկամ և սիրելի ըլլալ դժուար հաւատարմ բան մըն է : Վստգրիայի վրայ թօքսանայի կառավարութիւնը ինչ և ինչ եղանակաւ բռնադատելն ալ սահմանադրութեան և ազգային իրաւանց դէմ ըլլալով հաւանելի չէ որ Վստգրիան ասանկ բան մը ընէ :

— Վեճիմարի և Կոնստանտնուպոլիսի խորհրդարանի Վոստգրիայի մարքաբարքէն իրեն խորհուրտեալ նամակէ մը աննելով անանկ կը ցրցունէ որ ինկիլիզը Վստգրիայի հետ աւրուած է, և մօտ օրերս թօքսանայի նաւահանգիստը պաշարելու խօսք կայ : Սառտենիայի տերութիւնն ալ այս կուսուց մէջ (թէ որ ըլլայ նէ) զինեալ չէրթուցիւն պահելու պատրաստութիւն կը տեսնէ : և զինուորական

յանձնարարական ժողովք մը որոշեբ է, որ դիտուողութիւններ ընելու բանակ մը կարգադրելու միջոցները խորհին : Վստգրիայի 30,000 մարդով պիտի բաղանայ և Վեճիմարի և Վոսլի քաղաքներուն մէջ տեղի դաշուր պիտի ըլլայ իր տեղը : Վստգրիայի տերութիւնն ալ իր զօրքերը կը շատցնէ Վարեգէ և Վիաչէնցա և Վոսլիայի կողմերը :

Վրացիին կը գրեն, կ'ըսէ քաղաքի օրագրը որ ինկիլիզին ու Վստգրիային աւրուելու պատճառ երդ Վեճը առանց կուսուց ըմնալու վրայ է :

ՀՈՌՈՄ : Փարիզը քաղաքի օրագրը Հոռոմէն առած լուրեր կը հրատարակէ որոց երեւելները հետեւեալներն են :

Սրբաբար Հոռոմացու մէջ տակաւին հասարակապետութեան կուսակիցներու խորհուրտեալ կայ : հասարակապետականները որ անդ որ քաղաքը զինուոր մը մինակ կը գտնեն նէ կը զարնեն կը մեռցունեն, և Պրանսիոյ զինուորական կառավարութիւնն ալ ասանկ անգամները զսպելու համար խորհուրտեալ կը վարուի, Պապին Հոռոմ չգառնալուն մէկ պատճառն ալ այս կրնայ ըլլալ : Իր պիտի հասարակապետական կողման լրագիրները սուտ խօսքերով և զրպարտութիւններով Հոռոմացու հիմակուան նոր հաստատուած կառավարութիւնը ստելի ընել կ'ուզեն : Կրնան որ Չեռնուքի անուն մէկը դատաստանի քաղաքացու, վրան յանցանք մը չգտնուեցաւ ալնէ՝ վերտին բանալը դրուեցաւ : որպէս զի բողոքայ ատենը մէկ մըն ալ ասոր դատաստանը տեսնէ և դատապարտէ : Բայց Չեռնուքի դատաստանն անպարտ ելելէն ետքը ազատ թող տրուեցաւ, և ինքը իր յօժար կամաւը Չիլիթիա Վեճիայ գնաց : նաւ մտաւ, Հոռոմացու սահմանէն դուրս ելաւ : Վստգրիայի Վիլիամը մէջ հասարակապետական և ապստամբութիւն գրգռող լրագիր կը հրատարակէր, հիմայ ալ կրնայ մէկ տեղ մը երթալ : և լրագիրով չկրնայ վստարելի նէ՝ ապստամբներուն պատնէջ չենել կը սարկեցնեն : որուն մէջ վարպետ ըլլալու Հոռոմացու վերջին կրոււոյն մէջ փորձով հասկըցուց, թէպէտ ինքը կարգաւոր ալ էր :

Կրնան որ Վեճիցի Վերի անուն մէկը բռնուեցաւ Վեճիկոնին Ռօսսին մեռցնելուն համար : Բայց Ռօսսին որ Հոռոմացու հասարակապետութիւն սկսեցն առաջ Պապին գլխաւոր նախարարն էր, մեռցնողը Վեճիցի Վերին չէր, ասիկայ Վալմա կարգինալը զարկաւ մեռցուց : Ռօսսին մեռցնողը ինչ ըլլալու յայտնի չէ : ոմանք կ'ըսեն որ Վեճիկոնի միւր ցեալ նահանգները փախաւ : ուրիշները կ'ըսեն որ իւր գործակիցները զինքը թունաւորեցին, որ ձեռք անցնի նէ զերեք բերան չտայ : Բայց Հոռոմացի մէջ ասոնց ով ըլլալը չգիտցող գրեթէ չկայ :

Վանիցի իշխանին տղան կառքին մէջ ծաղկապատ հրաձիգ գետակը ձգող դաւաճանը գրանուէր ձեռք անցեր է : որ հիւանդանոցի գործակալ մըն է եղբ : Վ. Վերիցի Ֆրանսիոյ մըն ալ անցանքը Հոռոմացու փողոցներուն մէջ մեռցուցած էին : ասիկայ մեռցնողն ալ գտնուեն : և սոսնք քննելով և հարցիտած ընելով ուրիշ մարդապաններն ալ գտնելու ծայրը ձեռք առնուեր է : Վստգրիայի մէկ գաղանի ընկերութեան մը կանանները ձեռք ձգեբ են : որուն նպատակը ուրիշ ամեն գաղանի ընկերութիւններուն պէս, անիշխանութիւն և յափշտակութիւն է :

ՋՈՒՆՅՅԵՐԻ : Վեճի քաղաքէն հետեւեալ լուրը կը գրեն Փարիզը քաղաքի օրագրին : « Վրացի գիտնալու չեմ երկրայի որ ժամանակէ մը ի վեր Հեճիլտեան դաշնակցութեան նախագահ խորհրդարանն ու Վրացիայի դեսպանը Վ. Վիլիամը ըրուին իրարու ազդարար գրեբ և պատասխաններ կը խրկեն : Վրացիայի ու Օւլիցիցի մէջ եղած գրաւոր վեճերուն զխաւոր առարկայն, ինչպէս որ յայտնի է, Վեճիցիք բանը կրնայ ըլլալ : Վրացիայի կառավարութիւնը կը պնդէ որ այն գրքստութեան երկիրներուն վրայ ունեցած իրաւունքը յիշեալ դաշնակցութեան 1815 ին հաստատուած պայմանագրոյն խօսքերուն վրայ հաստատուած է : Օւլիցիցիքի կառավարութիւնը կը պատասխանէ : Օւլիցիցիքի կառավարութիւնը կը պայմանագիրը չընուեցաւ 1815 ին պայմանագիրը ջրեցաւ : Վրացիան կ'ըսէ : 1815 ին պայմանագրոյն հաստատուն բռնուելուն օտար տերութիւններն ալ երաշխաւոր եղան : Օւլիցիցիքի խորհրդարանը կը պատասխանէ : ամեն աղաւ երկիր իր ներքին կառավարութեան գործերը իշխանութիւն ունի իր

գիտցածին պէս կարգի դնելու . և օտար տէրութեանց երաշխաւորութիւնը ասանկ բաներու մէջ չլինար ուժ և ազդեցութիւն ունենալ : Կը տեսնես որ ասիկայ դժուարաւ լուծանելի մէկ դիպուած մըն է . և երկու կառավարութեանց ալ օգուտը անանկ կը պահանջէր որ որքան որ հնար էր նէ այս խնդրոյս լուծմանը ուշկէկ ձեռք զարնուէր հիմա ժամանակը չէր :

Մասնաւորապէս կերեւի որ Ռուսիայի կառավարութիւնը այս բանիս վրայ շուտով և կարգաւորեալ պատասխան կ'ուզէ . որովհետեւ վերջուրով 18 ին (ըստ լատինացւոյ), առտուանց Պետլինու թագաւորական գիւնանին կողմէն արտաքոյ կարգի խրկուած սուբսանդակ մը Պ . Վ իլ տէնտրուտին քանի մը նամակներ բերաւ . որոնց մէջ ուրիշ կարգադրութիւններէն զատ սա ալ կար որ ինքը առանց ժամանակ անցընելու Օրւիցքերէն դուրս ելլէ : Դոր տեղը Պ . Հէլտէստանտ պիտի գար , բայց հիմա չգալու եղած է . և Օրւիցքերի մէջ Ռուսիայի վերաբերեալ գործերը պիտի հոգայ Պ . Միտ , որ Վուրգեմպերկի Շոուզիաւա քաղաքը դեսպան կը նստի : Ստաբուլի պէտք չէ . այս բանը կը գուշակէ որ մօտերս Ռուսիա և Օրւիցքերի ծանրկէկ պիտի աւրուին իրարու հետ :

ԱՄԵՐԻԿԱ : Յայտնի է որ տարուէ տարի պաշտօնը անկողն որսալու համար քանի մը ծովեզերեայ ազգեր , ինչպէս են Ինկիլիզը , Ֆիլիպինները , Ամերիկացիք , և այլն . հեռուսը ծովային ծանապարհորդութիւններ կ'ընեն Ալիկանտի մէջ , Հիւսիսային ամերիկայի միացեալ Նահանգներուն բնակիչներէն քանի մը հոգի նաւերով ասանկ ձկնորսութեան ելլելով ալեկոծութեան կը բռնուին , և Չինաստանի արեւելեան կողմը Ղաբան ըստւած կայսերութեան կողմերէն մէկուն վրայ նաւը ցամաքը կը զարնէ . և իրենք դուրս ելլելու կ'ընտրուին :

Ղաբանի կայսերութեան հին և հաստատուն օրէնքն է որ , օտարազգի նաւ իրենց ցամաքը պիտի չի մօտենայ , ֆիլիպիններէն զատ . ֆիլիպիններուն համար ալ յատկացած տեղ կայ Նանկասաքի քաղաքին ծովեզերքը : Կտնը ոչ ֆիլիպինէն էին , և ոչ ալ ելլած տեղերին անոնց յատկացած տեղն էր . ուստի տեղացիք նաւուն վրայ թափեցան . նաւն ու մէջի ինչքերը ամբողջ իրենց առին . մարդիկն ալ բռնեցին և իրենց կայսերութեան օրինացը համեմատ մտադունելու եղան : Բայց մէջերին գըթա սիրտ մէկը գտնուեցաւ , որ կարող եղաւ իւր ընկերները համոզելու որ այս օտարականները չմեռցնեն . այլ ազատ թող տան . ըսելով որ ասանք չի գիտնալով և անամայ կամօք հոն ելլած են : Հաճեցուց . և մարդիկը ազատեցան :

Վսիկց առաջ ուրիշ անգամ մըն ալ Վերիկայի հասարակագետութեան նաւու մը ասանկ անվայել բան ըրած էին . ուստի հասարակագետական կառավարութիւնը քանի մը պատերազմական նաւեր զարգարելով այն կողմերը պիտի խրկէ , քաշած վերանսները Ղաբանի կայսերութեանն ուղղելու համար . և կարծիք կայ որ անկէց ետքը նոյն կայսերութեան հետ վարուելու ուրիշ ծամբայ ալ բըռնէ :

ՍՊԱՆԻԱ : Եւրոպիէ և Մառտենիայի և Վրացիներու տէրութեանց կողմէն Մարտիոս նստող դեսպանները երբքը մէկէն իրենց տէրութեանն հըրաման ուղղեցին որ հայրենիքին դառնան , երեք ամսոյ չափ հոն մնան , և նորէն իրենց պաշտօնին տեղը գան : Սպանիայի թագուհին ասոր վրայ շատ նեղացաւ . այն կարծեօք որ ասանք ուղղած չըլլան թագուհւոյն տղայ բերած ատենը որուն ժամանակ կը մօտ է , հոն գտնուելու . և թէ որ հրամանը դայ նէ յիշեալ երեք տէրութեանց ու Սպանիայի մէջ պաղղութեան նշան մը պիտի բռնուի :

Կըսուի որ երբ որ ինկիլիզը յուսոյ տէրութեան հետ գործը լրացնէ նէ անվայելութեան խառնակութեան ըրած անարգանացը վճարուելու պիտի ուղղէ : Վսիկց քանի մը տարի առաջ Սպանիայի տէրութիւն մէկ բանի մը համար նեղանալով ինկիլիզը դեսպան Պ . Պրուէլը ետ խրկեց . որովհետեւ այն ժամանակի քաղաքական խառնութեանց ասոր ալ հազրոց ըլլալուն նշանները տեսաւ :

ՌՈՒՍԱՍՏԱՆ : Պետրբուրգի լրագրող ինչպէս անուն ուսուերէն լրագրիւնն առնելով կը գրէ թէ ,

Վրաստանի մէջ այնքան շատ ձիւն է եկեր , որ բոլոր զինուորական ծամբաները գոցուէր են . քաղցով անգամ այն ծամբաներէն երթալը անհնար է եղեր :

ՀՆԴԿԱՍՏԱՆ : Հնդկաց ծովուն մէջ Ղալիս կղզին հրաբուրդ մը կար , որ շատ ժամանակէ ՚ի վեր բոլորքած չըլլալով չիլեալ հրաբուրդներուն կարգը մնած էր : Ընցած 1849 տարուան սեպտեմբեր 14 ին այս հրաբուրդը յանկարծ նորէն բոլորեցաւ . նոյն ատենը սաստիկ փոթորիկ մըն ալ կը տիրէր օդոյն մէջ . բայց լեռան պէս կ'երկէր . և այնպէս մինչեւ նոյն ամսոյն 17 օրը իրիկունը տեւեց : Ընհամար քար և աւազ նետոց դուրս . որ հովուն առաջը ինչպով մօտերը գտնուած երեք վիճակ (քաղա) տեղերուն երեսը երեք մասնաչափ բարձրութեամբ գոցեց . և մէկ գետի մը ձոր լեցուեցաւ այս նիւթերով . որով գետն ալ իր ընթացքը աւրուելուն համար չըջալայ երկիրները կոխեց : Մօտ տեղերուն բնակիչները վախերնուս տուներնին տեղերնին ձգեցին փախան : Սարգու կորուստ չի կայ . բայց շատ ինչք կարսուեցան : Իրինն և ճըխտիտ և լեղակ (չիլիտ) և յորեն , ամենքն ալ աւրուեցան : Հնդկաստանի լեղակին շատը այն կողմերէն կուգայ , հոն ալ այս կերպով լեղակը աւրուած ըլլալուն հիմակուց գինը բարձրացած է . և կերեւի որ մինչեւ նորը ելլէ նէ աւելի կը բարձրանայ . որովհետեւ քանի քիչնայ նէ կը բընտրուի . և քանի բընտրուուի նէ ստակ կ'ընէ :

ՅՈՒՆԱՍՏԱՆ : Սարաի 20 ին (8 ին) տեղացոյ խոռուսալ քը յօնարանի քը լրագրին ասանկ կը գրեն Յունաստանէն :

Վարդիայի շոգէնաւով իմացանք որ Ինկիլիզի տէրութեանը Հելլենական տէրութեանն ուղղած պահանջմունքներուն , և մէջերին եղած վեճերուն հիմայ առաջուանէն աւելի աղէկ տեղեկանալով իր կողմէն Դոնուա նստող դեսպանին՝ երկու տէրութեանց մէջ եղած բարեկամութեանը համեմատ գիր գրեց : Պետրբուրգի դիւանը ինկիլիզներուն պահանջմունքը աղէկ քննելով պատշաճ չղատեց որ այս բանին խառնուի . յունաց տէրութիւնը տեսնելով որ իրենց յուսացածը այս կողմէն պարտաւեւաւ , հիմայ յոյս կայ որ Ֆուանալը կառավարութեան կողմէն Վիեննա խրկուած Պ . Կոբարձ կալին խօսքին կը պառկած Պ . Կոբարձի հանձմունքը իրաւացի ըլլալը կը ծանշան . որով Յունաստանի հիմակուան գէշ վիճակը քիչ ժամանակի մէջ աղէկի կը դառնայ :

Ռուսաց տէրութեան արտաքին գործոց տեսուչ Նէսելուօ կամը նոյն տէրութեան կողմանէ Դոնուա նստող Պ . Պրուէլին նամակ մը կը գրէ . որուն մէջ կը յուսայ և կը վստահի որ ինկիլիզի և յունաց տէրութիւններուն մէջ եղած վեճը բնաւ վերջած չէ ալ նէ շատ թեթեւցած ըլլայ ֆուանալը տէրութեան միջնորդութեամբը : Եւ մասնաւորապէս Սարաիայի և Եւրօփոսի կողմերուն համար խօսելով կ'ընէ . ասոնց վրայօք ինկիլիզին ըրած պահանջմունքը պարզապէս ստակ ուղղու չի նմանիր . երկրի վրայ ըլլալով սահմանի որոշման կը վերաբերի . և Յունաստանի սահմանը երեք տէրութիւն մէկէն որոշեցինք Յունաստանի թագաւորութեան հիմնուած և հաստատուած ժամանակը . ուստի հիմակուան ինչոյն ալ այս կողմերուն համար միայն ֆուանալը և ինկիլիզի տէրութեանց մէջ լրացնելով ուսուց տէրութիւնը դուրս ձը գել չըլլար : Սեղի կերեւի կ'ընէ , որ այս կողմէն մեր իրաւունքին տէր կրնանք ըլլալ օրինօք , դու ալ այս նամակի ինկիլիզի կառավարութեան հարող գերով ասոր վրայօք մեր տէրութեան գիտաւորութիւնը իմացընես :

ՕՒՆԱՐԱՆ ԼՈՒՐ

Ստորագրի մը : Փարիզու խոռուսալ քը շրջապահ օրագիրը հետեւեալ պատմութիւնը կ'ընէ : Կըր որ մէկը կանակը կուզ (խամպուռ) մը , ձեռքը դուրս առնալ , կը կը երկան և ձեւմակ մօրուք մը , մաղրը կ'ընծմամ , աչքերուն նայուածքը մարածի պէս , Սաճառիտանի ներսերէն ֆուանալ գուրու ըլլայ նէ , գեղի տղոց դիւրին է զինքը շտտոնըւրնէ մնացած ծանապարհորդ մը , և գրեթէ տեսակ մը խառնուան կրեայ կարծել տալ : Հէնրի Ստեւարտն անուն մաճառ մըն ալ ասանկ ըրաւ . Բայց Փարիզու մէջ վարժուած մարդիկ կան , որ սուս

և չինու խառնուան կրեայները . շատ աղէկ կը ծանշան : Երկան ու ձեւմակ մօրուքին տակէն կերպաւ բանեալ մարդուն բուն տարիքը կը գտնեն . առանց գաւազանի կը քաղցընեն . մէկ անկարկութիւնով մը կ'ընակին կուզն ալ աներեւոյթ կ'ընեն . և Պետրաստի ժամանակէն մնացած մարդու մը ծանր ու գողոցուն քաղաքը անանկ արագընթաց կ'ընեն որ Վիլիկէի որական խոռոքին մէջն անգամ անանկ շուտ քաղցընքը յարգութիւն կ'ըստանան :

Ստեղծեալ խառնուան կրեայ Սանեւանը յունուար 11 ին դատաստանական ատենին առաջը բերուեցաւ . չէ թէ իբրեւ պարսպ պըտըտող , այլ իբրեւ մարաջիան : Փարիզու փողոցները կը պըտըտեր . անցնողներէն որորմու թիւն կ'ուզէր . ինչ որ տային նէ , հայի կասր մըն ալ ըլլար նէ կ'առնէր :

Բայց ինչպէս որ մօրուքին ու գլխու մաղցընու ձեւմակութիւնը իրեն ձերութեանը նշան չէր , նըմանապէս հագած քըռքըտ լալթերն ալ աղքատութեանը նշան չէին : Ստեղծութեան գործակալ մը ասոր տուելը բնութեան գայած ըլլալով ատենը դատաւորներուն առաջը այս պատմութիւնս ըրաւ :

Սանեւանին հետ իրեն բնակած խցիկը գաւցինք , որ գետնի վրայ պղտիկ բակի մը խորունկ կողմը խոնաւ ու մուժ տեղ մըն էր : Պարկը (հէյպէն) բացինք , և մէջը միտրապոյն կուսէ շինուած գօտի մը գտանք , որ քանի մը կասր սպասէրով գոյուած պահարան խորշեր ունէր . անոնց մէջ գտանք 57 հատ բըռնուայի և հաննօլէրի ոսկի , ամէն մէկուն գինը և ուրիշ ոսկիներ , ամէն մէկը 20 էն մինչեւ 24 ֆուանք : Երկու հատ սասանական ֆըրանքոնց Ռուսիայի ոսկի . և 100 ֆուանք արծաթ գրամ . ամէնը մէկէն 5000 ֆուանքի չափ : Կտնուած զատ նոյն պարկին մէջ երկու հատ մեծ ոսկի հնուդ (չալար) ժամացոյց կար , և հաննօլէրի դըրամստեղանէն պահպանեալ եկամուտի թուղթ մը , և 15,000 ֆուանքոց գետնի մը իրենը ըլլալուն մուրհակը (սէնէտը) . և երկու հատ սամալը կնիք . ուրոնց վրայ Հէնրի Սանեւան անունները սկզբնաւ գրուած , և թագ մըն ալ գրուած էր : Սարիզ երկու պարկի մէջ ալ մարտը և նոր լալթեղէններ և ուրիշ բաներ կային . որոնց յանուանէ յիշելիքն են մէկ ժամացոյցի շղթայ քոթոլէ մը ոսկի . մէկ քոթոլ մը և շալտիկի պոթոլներ իօթմանը ամէնն ալ ոսկի , կամ ոսկեջրած պղինձ : Եւրոպան հարստութիւնները երեսուն երեքուն Սանեւան անտարբէր և անհպ կը կենար . և երբ իրեն հարցուցին թէ գու՛ն անուակաւն ես , որ ասանկ պատկաւոր և քու անուանդ սկզբնապիւնքովը գրուած մամ կնիք ունիս , պատասխան տուաւ . մեր երկրին մարդիկը ամէնն ալ ազնուական են : Եւս պատասխանըս որքան աղէկ երեւցաւ ալ նէ մաճառ ագնուականը չկրցաւ իր յանցանացը համար յատկացած պատիժէն ազատել . տարի մը բանար կենալու դատապարտուեցաւ :

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Իտալիայի Սեպտեմբր 11 ին խոռուսալ քը շրջապահ օրագիրը ծախու է . ո՞վ որ պէտէն ի՞նչէ , ի՞նչ երկայ Սեպտեմբր թիւրիմի մահուսի Սանեւան լեղացըր տեսնէ :

Եւս պոնը երկու խոռուսալ քը գետնի վրայ խոռուսալ քը ասին մէկ խոռուսալ քը ծախու սեւեակներ ունի , և մէկ մէկ ալ ընդարձայ սոֆա՝ ամէն կարիսոր եղած շէնքերով : Իտալիայի խոռուսալ քը ընդարձայ բան մըն է , ունի թիւրիմ սեւեակ մը , և ընդար մը . նոյնպէս ընդարձայ խոռուսալ քը ալ : Եւրոպայի շէնքը 400 խոռուսալ քը գետնի վրայ է : 12 Եւրոպայի քոթոլի չափ ալ պարտեղ ունի քանի կնիք , նորայէն և կասաւ անուն պարիսպներով շրջապատած . մէջը սեթ սեթ բաժնուած . երեք հոլ և մէկ մըն ալ պոսպան խոռուսալ քը , և մէկ վրան ծախու կա թիւր մը , որուն պակը սաստայ կը շաղտի ի՞նչ կենայ . մէկ սամանըն մը և մէկ սպասարի սեւեակ մը , և այլն :

ՀՐԵՏԵՐԱԿՉ
ԼՐԱԳՐԻՍ
Պրոսպի Զովաննէս
Չամոռաճանց :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի Տ Պ Ա Ր Ա Ն Ի Ե Ո Վ Ն Ա Ն Ն Ո Ի Մ Ի Ի Զ Ի Ե Ն Տ Ս Ս Ե Ն
Ի Վ Ե Օ Ի Ի Ե Լ Ե Ն